

սահմանամեջս իշխանութեան նորին եւ Անտիոքայն. այլ անդէն կասեցան զէնքն մահաբերք՝ գուժիւ երագագոյն մահու՝ այնքան մահունց ներգործող աշխարհակալին. մեռաւ նա 'ի Դամասկոս յառաջին աուրս ամսեան փերբուարի. եւ իբրեւ 'ի նոր կենդանութիւն փոխեցաւ Լեւոն, զերծեալ յիւրոց կասկածանաց եւ 'ի նորայոցն սպառնալեաց:– Ոչ շնորհեցաւ պատմութեան՝ իրապէս կամ անձամբք յանդիման իրերաց կացուցանել զերկոսին ախոյեանսն՝ 'ի թատր իւր, եւ տեսարան մի եւս սխրալի ցուցանել ապա եկելոց³⁵. թէպէտ եւ եղերական եւս լինէին ելքն՝ մերոյս կողմանս, այլ անշուշտ ոչ վրէպ 'ի մեծութենէ. սակայն թէ ոչ իսկապէս կամ նիւթապէս, այլ բանաւորապէս կատարեալ է հանդէսն՝ հասեալ ցայսվայր եղելութեան. անմարթ է իմաստասէր մտաց չկալ չհամեմատել առ վայր մի զԼեւոն եւ զՍալահէտտին, յետ համեմատելոյ զսա եւ զնա՝ ընդ այլոց զուգաժամանակ վեհից, թէ գոյին եւ այլք հաւասարելիք սոցին: Ծաղր արդարեւ լինէաք յաչս զգօնից օտարաց՝ եթէ տարապայման մերասիրութեամբ զփոքրիկ պէտ փոքու մասին ազգիս՝ 'ի կշիռ զուգեաք այնքանոյ առ հասարակ յամենեցուն յարեւելեայց եւ յարեւմտեայց, 'ի բարեկամաց եւ 'ի թշնամեաց՝ վկայելոյ եւ գովելոյ, մեծի եւ հզօրի առն, որպիսի ոք Սալահէտտինն էր. տոհմիւ արդարեւ գծուծ եւ սինլքոր՝ առ ազնուութեամբ մերոյս Լեւոնի, եւ բարութն՝ վատթարագոյն եւս յերիտասարդութեանն, յոյլ եւ շռայլ. մինչեւ բռնի եւ ստեպ մղիլ 'ի Նուրէտտինէ՝ 'ի զինուորութիւն եւ 'ի վարչութիւն, յոր մերս Լեւոն ինքնակամ եւ իբր ընդաբոյս ախորժանօք ձկտէր. այլ յետ միանգամ զմարտից եւ զաւագութեան համ առնելոյ՝ դիւցազնանայր Քուրդն Դունացի³⁶ կամ Տիգրիտցի, եւ արութեամբ եւ հնարագիտութեամբ, խոհականութեամբ եւ մեծոգութեամբ, իշխեցից ասել թէ եւ առաքինութեամբք՝ ըստ տուչութեան բնական շնորհաց, գերազանցեր

³⁵ Ոչ գիտեմ՝ իմաստասիրական խելամտութիւն իցէ՝ եթէ վայրապար խելատանջութիւն, վարանել խոճոճել, եթէ յարշաւել միսել Սալահէտտինի վրէժխնդրութեամբ 'ի Սիսուան, կամ թէ սակաւ ինչ կանխեալ էր ժամանակաց՝ եւ մտեալ Թաթարաց անդիմակաց գումարտակօքն յարեւմտեան Ասիա, որպիսի՝ ոք հանդիսանայր Լեւոն. լինէ՞ր արդեօք որպիսի եղէն, ինքնագլուխ թագաւոր Հայոց: Հաւատամ, զի այնմ՝ զոր Աստուած կամիցի մեծ առնել 'ի վերայ երկրի, հարթէ եւ զճանապարհ մեծութեանն, եւ որպէս առ օծեալն իւր Կիւրոս՝ ասէ ծածուկ տեսչութեամբն, «Ես երթայց առաջի քո. զլերինս հարթեցից, զդրունս պղնձիս խորտակեցից, եւ զնիզս երկաթիս փշրեցից. եւ տաց քեզ զգանձս խաւարինս». եւ այլն (Եսայի, ԽԵ):

³⁶ Պատմիչք մեր զազգատոհմն Սալահէտտինի համարին Քուրդ ազգաւ, եւ 'ի սահմանաց քաղաքին Դունայ: